

Հայտարարություն

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարվում է մրցույթ , քիմիա /7 դասաժամ / առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել ուսուցչի պաշտոնին ներկայացվող՝ << Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. Դիմում՝ /Ձև1/,
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ /դիպլոմ /,
3. Անձնագիր ,
4. Աշխատանքային գրքույկ,
5. Ինքնակենսագրություն /Ձև 4 /,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/,
10. Որակավորման տարակարգ /առկայության դեպքում/,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020թ.

ապրիլի 7 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից -15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. ապրիլի 10 -ին՝ ժամը 12.00 -ին,

Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կալավան

Հեռախոս 093149993 :